
ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ
ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԹԵՐԵԶԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Դասական գրաբարի շարահյուսության առանձնահատկություններից մեկը բազմազան հոմանիշ՝ քերականական կառույցների առկայությունն ու դիպուկ կիրառությունն է: Իրականության և երևույթների միջև գոյություն ունեցող միևնույն կապերն ու հարաբերություններն արտահայտելու համար մեսրոպյան շրջանի հեղինակները հստորեն գործածել են գուգահեռ շարահյուսական կաղապարներ, որոնք ավելի ճոխ ու պատկերավոր տեսք են տվել մեր ոսկեդենիկ գրաբարյան լեզվին: Նախքան դրանց առանձնահատկություններին անդրադառնալը համառոտ ներկայացնենք հոմանշության արդի լեզվաբանական ըմբռնումը:

Հոմանշությունը՝ լեզվական տարբեր ձևային կառույցների միջոցով նույն կամ իմաստով մերձ բովանդակությունն արտահայտելու իրողությունը համարվում է արդի ոճագիտության առանցքային հարցը¹: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզվական հոմանիշ կաղապարների առկայությունն առաջ է բերում խոսքային այս կամ այն իրադրությանն առավել համապատասխան լեզվական միավորի ընտրության ու գործածության անհրաժեշտությունը, որն էլ հենց ոճագիտության հետաքրքրության հիմնական առարկան է²:

Հայ լեզվաբանության մեջ հոմանշությունն առավելապես ուսումնասիրվել է բառային մակարդակում՝ հոմանիշ բառերի իմաստային ընդհանրությունների ու կիրառական առանձնահատկությունների վերլուծության կտրվածքով: Միայն վերջին տասնամյակներում է հայ որոշ լեզվաբանների աշխատություններում առաջադրվել ու հիմնավորվել այն գաղափարը, որ լեզվական հոմանշությունն ամեննին էլ չի սահմանափակվում բառագիտական մակարդակով, այլ ունի նաև քերականական դրսևորումներ³:

¹ Տե՛ս, օրինակ, Ա. Ա. Մ ա թ ու թ յ ա ն. Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000, էջ 36:

² Լ. Եզեկյանը գրում է. «Որտեղ հնարավոր է լեզվական միավորների ընտրություն, երկձևություն կամ բազմաձևություն, բնականաբար այնտեղ կան նաև հոմանիշներ կամ հոմանշություն, որոնց ընտրության, կիրառության հարցերով զբաղվում է ոճագիտությունը: Ահա հենց այսքանով էլ հոմանշությունը իրավացիորեն համարվում է ոճաբանության ուսումնասիրության կարևորագույն, հիմնական, առանցքային խնդիր» (Լ. Կ. Ե զ ե կ յ ա ն. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 197): Հետևելով Լ. Եզեկյանին՝ հոմանշությունը հասկանում ենք լայն առումով՝ նրա մեջ ներառելով ինչպես հոմանիշ, այնպես էլ նույնանիշ լեզվական կառույցները:

³ Մասնավորապես, Պ. Պողոսյանն առաջ է քաշել քերականական հոմանիշների լեզվաբանական ուսումնասիրության կարևորության գաղափարը՝ նշելով, որ «Հոմանշությունն այժմ ըմբռնվում է ոչ միայն իբրև լեզվական մեկ միավորի փոխարինելի լինելը մի այլ միավորով,

Հայերենի շարահյուսական համանիշների ընդգրկումն ու համակարգված հետազոտությունն իրականացրել է Ն. Պառնասյանը, որի կարծիքով «Շարահյուսական համանիշները նույն հիմնական բառակազմն ունեցող այն բառակապակցությունները, նախադասությունները և ավելի մեծ շարահյուսական կառուցվածքներն են, որոնք տարբեր քերականական միջոցներով արտահայտում են բնության երևույթների, առարկաների միջև գոյություն ունեցող նույն հարաբերություններն ու կապերը, հավասարարժեք են իրար և միաժամանակյա դրսևորում են խոսողի տարբեր վերաբերմունքը, հարաբերությունը հաղորդվածի նկատմամբ»⁴:

Գրաբարի շարահյուսական ողջ համակարգի քերականական բոլոր կարգերում նկատելի է միմյանց հանդեպ հարացուցային հակադրության մեջ գտնվող քերականական կադապարների՝ մեկը մյուսի փոխարեն հանդես գալու լեզվաձևական ուշագրավ ունակությունը: Այսպես, դասական գրաբարում լայն տարածում են գտել լրիվ նախադասությունների փոխարեն դրանց թերի հոմանիշների կիրառությունը, որտեղ հաճախ նախադասության գլխավոր անդամներն արտահայտման մակարդակում հանդես չեն գալիս, ինչը սակայն չի խանգարում դրանց բովանդակային իմաստի ամբողջական ընկալմանը. «Եւ պղտոբէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին, եւ միւս եւս նահապետն Ռդունոց տոհմին: Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ, եւ բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ» (Բուգ., 9), «Եւ թողոյ ի վերայ նորա զամենայն շէնս, որք ի գերութենէն Մարաց: Եւ յարեւելից կողմանէ, զեզերք հայկական խօսիցս, կողմնակալս բիրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՄիսակեանսդ եւ որ ի Կադմեայ տանէն, զորոց զանուանսն ի միում ի յառաջագունից ասացեալ ճառիցն կարգեցաք» (Տոբ., 113): Նույն երևույթն է նկատվում միակազմ և երկկազմ նախադասությունների կիրառման պարագայում. օրինակ՝ գրաբարում անորոշ դերբայով կազմված բայական միակազմ նախադասություններն արտահայտման մակարդակում ենթակա չունեն, իսկ ստորոգյալի բնեքը դրսևորվում է մասնակիորեն՝ անորոշ դերբայի միջոցով, որը ձևաբանորեն զուրկ է ստորոգում իրականացնելու հնարավորությունից. այսպես՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զիւրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակ, Ա, 1), «Մի՛ տալ զժողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց» (Բուգ., 163): Այս տիպի նախադասությունները, ուղեկցվելով համապատասխան հնչեքանգով, բովանդակային մակարդակում հիմնականում արտահայտում են հրաման, հորդոր, պահանջ, առաջարկություն և «...իրենց բնույթով մտնում են հրամայական նախադասությունների շարքը, բայց, իհարկե, չունեն այն լայն, բազմապիսի կիրառությունները, ինչ որ դիմավոր բայով արտահայտված հրա-

այլն ամեն մի այլ ձևախմաստային միավորի փոխարինելի լինելը ամեն մի այլ ձևախմաստային միավորով, ըստ որում մեկ բառ կարող է փոխարինվել մեկ այլ բառով, մեկ քերականական ձևը՝ այլ քերականական ձևով (ձևաբանական ձևը՝ այլ ձևաբանական ձևով, շարահյուսական ձևը՝ այլ շարահյուսական ձևով)» (Պ. Պ ո ղ ո ս յ ա ն. Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 18–19):

⁴ Ն. Ա. Պ ո ղ ո ս յ ա ն. Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 38:

մայական նախադասությունները»⁵: Մա նշանակում է, որ բայական անդեմ միակազմ նախադասությունները բովանդակային մակարդակում ըմբռնվում են հիմնականում որպես երկկազմ նախադասություններ՝ ուղղված մեկ կամ մի քանի անձանց և, ըստ այդմ, ունենալով եզակի կամ հոգնակի թվով դրված ենթակա: Մեր օրինակներում նախադասությունների բովանդակային մակարդակներն այսպիսի տեսք ունեն. «Ծանիցե՛ք (ծանի՛ր) զիմաստութիւն եւ զխրատ, իմացարո՛ւք (իմացի՛ր) զբանս հանճարոյ», «Մի՛ տուր (մի՛ տուք) զժողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց»:

Սույն հողվածում մեր ուշադրությունն առավելապես բնեռել ենք քերականական հոմանիշների շարքում առանձնահատուկ դիրք գրավող շարահյուսական վերախմաստավորումների կամ, ինչպես երբեմն դրանք անվանում են, շարահյուսական փոխաբերությունների վրա, որոնք իրենց լեզվաոճական գործառական առանձնահատկություններով սկզբունքորեն տարբերվում են քերականական մյուս հոմանիշ ձևերից և աչքի են ընկնում զգալի արտահայտչականությամբ ու պատկերավորությամբ:

Ի տարբերություն շարահյուսական հոմանշության՝ «շարահյուսական վերախմաստավորում» հասկացությունը դեռևս լայն տարածում չի գտել հայ լեզվաբանության մեջ: Մեր ոճագիտական ուսումնասիրություններում այդ եզրույթն ընդհանրապես բացակայում է, այնինչ նրանով նշանակվող երևույթներն ունեն ընդհանրական բնույթ և սերտորեն առնչվում են շարահյուսական հոմանշության հետ: Լեզվաբանական ոճագիտության համար կարևոր նշանակություն ունեցող այս հասկացության ուսումնասիրությամբ որոշ չափով զբաղվել են նախկին խորհրդային որոշ լեզվաբաններ, որոնք էլ սովել են լեզվական վերախմաստավորման բնորոշումն ու նրա առանձնահատկությունների ընդհանուր բնութագրությունը: Լեզվաբանական վերախմաստավորում համարվում է այն երևույթը, երբ լեզվի կառուցվածքային այս կամ այն մակարդակի միավորները՝ բառերը, ձևույթներն ու նախադասությունները սկսում են կիրառվել իրենց համար անսովոր, հաճախ հակադիր քերականական նշանակությամբ՝ արդյունքում ձեռք բերելով ոճական հավելյալ արտահայտչականություն: Նման դեպքերում միմյանց են հակադրվում լեզվական միավորների իմաստային և ձևական մակարդակները, որի հետևանքով լեզվական բազմաթիվ երևույթներ նորովի են դրսևորվում: Քանի որ հնչյունները զուրկ են իմաստային մակարդակից և սուկ արտահայտման գործառույթ են իրականացնում, այդ պատճառով դրանց մոտ սույն երևույթը բացակայում է:

Վերախմաստավորման ժամանակ առաջին հերթին գործ ենք ունենում միմյանց հետ իմաստային կամ շարույթային որոշակի հարացույց կազմող լեզվական ձևերի հետ, որոնք ոճական որոշակի համատեքստում կարող են գործածվել մեկը մյուսի փոխարեն: Այսպիսով՝ վերախմաստավորումը՝ որպես լեզվաոճական ուրույն երևույթ, կարելի է բնորոշել որպես «...լեզվական որևէ միավորի

⁵ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդյան. Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 492:

կիրառությունը հարացուցային շարքում նրա հակադիր անդամի գործառույթով»⁶:

«Վերախմաստավորում» հասկացությունն առաջին օգտագործողներից են Մ. Կուզնեցն ու Յու. Սկրեբնը: Նշելով, որ ոճական արտահայտչականության կարևոր հնարներից մեկը շարահյուսական կառույցների՝ իրենց համար ոչ բնորոշ վերախմաստավորված իմաստներով գործածությունն է, նրանք այսպիսի ուշագրավ լեզվաոճական իրողությունների շարքում առանձնացնում են հռետորական հարցը և ժխտական իմաստով գործածվող հաստատական կադապարները⁷: Այս լեզվական երևույթին անդրադարձել է նաև Բ. Գալպերինը, որը սակայն չի գործածել «վերախմաստավորում» եզրույթը, այլ խոսել է շարահյուսական միավորների «փոխաբերական իմաստի» մասին: Մասնավորապես անդրադառնալով հռետորական նախադասություններին՝ նա ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ խոսքային կենդանի հաղորդակցման գործընթացում նման շարահյուսական կառույցների կիրառության պարագայում գործ ենք ունենում լեզվական միավորի քերականական իմաստի փոփոխության հետ՝ հարցական նախադասությունն օգտագործվում է նախադասության բնույթի հարացուցային շարքում իրեն հակադրվող պատմողական նախադասության իմաստով: Հայտնի է, որ հռետորական տիպի հարցական նախադասություններում հարցումը սոսկ ձևական բնույթ ունի, բովանդակության մակարդակում նման կառույցներն ամեննին էլ հարցում չեն արտահայտում: Համանման լեզվական երևույթ Բ. Գալպերինը նկատում է նաև նվագասույթի (литота) կիրառության դեպքում, երբ ձևով ժխտական նախադասությունն օգտագործվում է հաստատական իմաստ արտահայտելու համար⁸: Գիտնականը միտք է հայտնում, որ այս և նման դեպքերում միմյանց հետ փոխադեղության մեջ են մտնում լեզվական միավորների ուղիղ ու համատեքստային՝ միմյանց հակադրվող իմաստները, ինչի արդյունքում խոսքը ստանում է լրացուցիչ ոճական արտահայտչականություն⁹: Նրա կարծիքով նման դեպքերում գործ ունենք «փոխաբերական իմաստների» հետ (transferred meanings):

Վերախմաստավորման հիմնահարցերին ավելի հանգամանալից է անդրադառնում խորհրդային մեկ այլ հանրաձանաչ ոճագրան՝ Բ. Առնոլդը: Նշելով, որ շարահյուսության մեջ նախադասության դասակարգման հիմնական եղանակներից մեկը, ըստ նախադասության նպատակի, պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների առանձնացումն է: Նա ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ այս նախադասության տեսակներից յուրաքանչյուրը կարող է գործածվել մյուս տիպի նախադասության իմաստով՝ ձեռք բերելով լրացուցիչ հուզաարտահայտչական ոճական երանգավորում: Նման երևույթ տեղի ունի նաև հաստատական և ժխտական նախադասությունների դեպքում: «Այսպես,– նշում է Բ. Առնոլդը,– ձևով հաստա-

⁶ В. Г. Г а к. Транспозиция.– “Лингвистический энциклопедический словарь”, М., 1990, с. 519.

⁷ М. Д. К у з н е ц, Ю. М. С к р е б н е в. Стилистика английского языка. М., 1960, с. 90.

⁸ I. R. G a l p e r i n. Stylistics. М., 1977, р. 244-247.

⁹ Նույն տեղում, էջ 139:

տական նախադասությունները կարող են կիրառվել որպես հարցեր, եթե հարցնողը ցանկանում է ցույց տալ, որ ինքը կանխագուշակում է, թե ինչպիսին է լինելու պատասխանը: Այսպես կոչված հռետորական հարցերը ծառայում են ազդեցիկ հաստատմանը, իսկ հրամայական նախադասությունները երբեմն կարող են հաղորդել ոչ թե գործողության կատարման հորդոր, այլ սպառնալիք կամ էլ ծաղր»¹⁰: Այս և նման դեպքերում շարահյուսական կառույցների կիրառությունն իրենց բուն, անվանողական իմաստին ոչ բնորոշ քերականական իմաստներով Բ. Առնոլդն առաջարկում է անվանել վերաիմաստավորում (транспозиция, переосмысление)¹¹: Շարունակելով այս գաղափարը՝ Վ. Գակն առաջադրում է վերաիմաստավորման առավել լայն ըմբռնումը՝ «Լայն իմաստով՝ վերաիմաստավորումը ցանկացած լեզվական ձևի փոխարինումն է, օրինակ՝ ժամանակների փոխարինումը (ներկա ժամանակի կիրառությունն անցյալի կամ ապագայի փոխարեն), նախադասությունների հաղորդակցական տիպերի փոխարինումը (հարցական նախադասության կիրառությունը պատմողականի իմաստով) և այլն»¹²: Մեր կարծիքով, առավել ընդունելի է վերաիմաստավորման առնչության ըմբռնումը, որը լեզվական այս երևույթը կապակցում է լեզվական միավորի փոխաբերական գործածության հետ, իսկ Վ. Գակն կողմից առաջադրված առավել լայն սահմանման դեպքում կորսվում են վերաիմաստավորված և հումանիշ նախադասությունների տարբերակիչ առանձնահատկությունները:

Լեզվաբանության մեջ ձևավորվել է ավանդույթ, որի համաձայն վերաիմաստավորումն ավելի շատ հարաբերում է քերականական իրողություններին. բառային վերաիմաստավորման դեպքում հիմնականում օգտագործվում է «փոխաբերություն» հասկացությունը: Մակայն այս լեզվական երևույթների էական նմանություններն այնքան ակնհայտ են, որ փորձեր են արվում «փոխաբերություն» գիտական տերմինի բառիմաստի ընդլայնման միջոցով կազմավորել ու գիտական լայն շրջանառության մեջ դնել լեզվաբանական նոր հասկացություն՝ «քերականական փոխաբերությունը», որը համանիշ է համարվում «վերաիմաստավորում» տերմինին: Մասնավորապես, Բ. Առնոլդը հավասարապես կիրառելի է համարում այս երկու հասկացությունները, որոնք, նրա կարծիքով, նշանակում են միևնույն լեզվական իրողությունը, այն է՝ լեզվական միավորների՝ իրենց համար անսովոր քերականական նշանակությամբ գործածությունը, «...որն ստեղծում է լրացուցիչ հուզական, արտահայտչական, ոճական նրբիմաստներ»¹³:

Քերականական վերաիմաստավորման հիմքում ընկած է քերականական կարգ կազմող ձևային-շարահյուսական հակադրությունների հարացույցում լեզվական միավորի՝ հակադիր հարացուցային քերականական իմաստով հանդես գալու ուշագրավ ունակությունը: Ինչպես հայտնի է, «Քերականական

¹⁰ И. В. А р н о л ь д. Стилистика современного английского языка. Л., 1981, с. 165.

¹¹ Նույն տեղում:

¹² В. Г. Г а к. Նշվ. աշխ., էջ 519:

¹³ И. В. А р н о л ь д. Նշվ. աշխ., էջ 57:

կարգը ուրիշ կարգի չհանգեցվող, բովանդակության մակարդակում մեկ կամ ավելի հատկանիշներով հակադրվող և ձևաբանական կամ շարահյուսական միջոցներով արտահայտվող երկու կամ ավելի քերականությունների ամբողջությունն է»¹⁴, որտեղ քերականական իմաստն ու նրա ձևական կադապարավորումը հանդես են գալիս անքակտելի միասնականության մեջ:

Ուշագրավ է, որ հայ լեզվաբանության մեջ նույնպես անուշադրության չի մատնվել քերականական փոխաբերության առկայության հանգամանքը: Այսպես՝ խոսելով գրաբարում բայի քերականական ժամանակների մասին՝ Լ. Հովհաննիսյանը նկատում է, որ թեև ամեն մի ժամանակաձև ունի իր հարաբերականորեն կայուն ու անփոփոխ քերականական իմաստը, սակայն միևնույն ժամանակ «...երբեմն այս կամ այն քերականական ժամանակը կարող է հանդես գալ այլ ժամանակի իմաստով»¹⁵: Մասնավորապես, սահմանական եղանակի ներկա ժամանակը գրաբարում կարող է կիրառվել ինչպես անցյալ, այնպես էլ ապառնի ժամանակային քերականական իմաստ արտահայտելու նպատակով, նման ոճական գործառույթ կարող են իրականացնել նաև անցյալ և ապառնի ժամանակի համապատասխան գրաբարյան ժամանակաձևերը: Լեզվական ձևերի՝ իրենց քերականական բուն իմաստին ոչ բնորոշ նման կիրառությունը Լ. Հովհաննիսյանն անվանում է ձևային կառույցների «երկրորդական, փոխաբերական կիրառություն»¹⁶: Ինչպես արդեն նշվեց, «քերականական փոխաբերություն» և «վերախմաստավորում» հասկացությունները մասնագիտական գրականության մեջ համարվում են նույնանիշներ:

Վերախմաստավորում՝ որպես լեզվատնային երևույթ, սերտորեն առնչվում է հոմանշության հետ: Դժվար չէ նկատել, որ վերախմաստավորվող, այսինքն՝ կոնկրետ, կենդանի հաղորդակցական գործընթացում հանդես եկող նախադասությունը և վերախմաստավորված՝ բովանդակային մակարդակում հանդես եկող ու նախորդ նախադասության հարացուցային հակադրությունը հանդիսացող լեզվական կառույցը միմյանց հետ գտնվում են շարահյուսական հոմանշային հարաբերության մեջ: Դասական գրաբարում հաճախակի են շարահյուսական այս կամ այն միավորի վերախմաստավորման դեպքերը, երբ արտահայտման մակարդակում նախադասությունների տիպային հարացույցի մի տեսակին պատկանող շարահյուսական կադապարն օգտագործվում է նրան հակադրվող հարացուցային ձևի քերականական իմաստն արտահայտելու նպատակով: Այսպես՝ գրաբարում լայն տարածում են գտել շարահյուսական այն կառույցները, ուր ենթակայի հետ մեկտեղ հանդես է գալիս դիմավոր բայի գործառույթ իրականացնող, բայց ձևականորեն նման ունակություններից զուրկ անկախ դերբայական միավորը՝ առանց օժանդակ բայի: Ըստ դերբայի արտահայտման եղանակի՝ նման կառույցները գրաբարում երկուսն են՝ «ենթակա + անցյալ դերբայ» և «ենթակա + անորոշ դերբայ»: Այսպես՝ «Արդ՝ ելեալ դահճա-

¹⁴ Գ. Բ. Դ յ ա կ ե ո. Общее и армянское языкознание. Ереван, 1978, с. 113.

¹⁵ Լ. Շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը. – Լեզվի և ոճի հարցեր, հ. 3, Երևան, 1973, էջ 256:

¹⁶ Նույն տեղում:

պետն պարծելով՝ չարամահ անել զնա, և ետ հանել զնոսա շղթայիք ի քաղաքէն» (Ագաթ., 111), «Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչել յօգնականութիւն» (Բուգ., 125): Այս օրինակներում առանց օժանդակ բայի գործածված անցյալ և անորոշ դերբայները ձեռք են բերել ինքնուրույնաբար, իրենց անդեմ ձևային կադապարով նախադասության ստորոգյալի գործառնություն կատարելու ունակություն: Անշուշտ, քերականորեն դերբայը գուրկ է նման հնարավորությունից, նախադասության ստորոգյալ կարող է դառնալ միայն խոնարհված բայը, սակայն մեջբերված օրինակներում գրաբարյան դերբայները կիրառվել են փոխաբերաբար, համապատասխան դիմավոր բայաձևի փոխարեն՝ բովանդակային մակարդակում արտահայտելով վերջինիս ժամանակային, դիմային և թվային հատկությունները: Վերախմաստավորման շնորհիվ արտահայտման մակարդակում դերբայական լեզվական միավորի օգնությամբ դրսևորված նախադասության ստորոգյալը բովանդակային մակարդակում հանդես է գալիս դիմավոր բայի գործառնությով. «Արդ՝ էլ դահճապետն պարծելով՝ չարամահ անել զնա, և ետ հանել զնոսա շղթայիք ի քաղաքէն», «Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչեց յօգնականութիւն»:

Համանման երևույթի ենք ականատես լինում դասական գրաբարում հաճախ փոխաբերաբար կիրառվող ժխտական նախադասությունների գործածության պարագայում: Այսպես. «Ի վերուստ յերկնուստ ունի զանսուտ արեւնսդրութիւնն. ոչ միջնորդաւ, զի մի է Աստուած, եւ չիք այլ ոք բաց ի նմանէ, ոչ երիցագոյն եւ ոչ կրսերագոյն» (Եղ., 29), «Եւ նոքա են որ առնեն զհանդերձս արանց, եւ նոքօք զարդարին եւ փառաւորի մարդիկ. եւ ոչ է հնար առանց նոցա լինել մարդկան» (Եզր, Դ, 17): Ինչպէս հայտնի է, քերականական հարացուցային կարգում այս տիպի նախադասություններին հակադրվում են հաստատական նախադասությունները, և հենց վերջիններիս իմաստով էլ բովանդակային մակարդակում գործածված են հիշատակված շարահյուսական կառույցները («Միայն Աստուած գոյ», «Միայն նոքօք է հնար լինել մարդկան») ¹⁷:

Թեև վերախմաստավորվող և վերախմաստավորված նախադասությունները, այսինքն՝ արտահայտության և բովանդակային մակարդակում հանդես եկող շարահյուսական կառույցները, հոմանիշ են միմյանց, սակայն ոչ բոլոր հոմանիշ շարահյուսական կադապարներն են իրար հետ գտնվում վերախմաստավորման լեզվառճական հարաբերության մեջ: Լեզվառճական այս երևույթի իրականացման համար անհրաժեշտ է, որ շարահյուսական կառույցը հանդես գա փոխաբերաբար, իրեն ոչ բնորոշ քերականական գործառնությով: Մասնավորապես, ներգործական և կրավորական կառուցվածքի համանիշ նախադասությունները, թեև հոմանիշային հարաբերության մեջ են գտնվում, սակայն այստեղ վերախմաստավորման երևույթ տեղի չի ունենում, քանզի այս տիպի նա-

¹⁷ Դասական գրաբարում հաստատական և ժխտական նախադասությունների վերախմաստավորումների մասին ավելի մանրամասն տե՛ս Թ. Շ ա հ վ եր դ յ ա ն. Հաստատական և ժխտական նախադասությունների վերախմաստավորումը դասական գրաբարում. – «Գիտական աշխատություններ, 8», Գյումրի, 2005, էջ 71–76:

խաղաղությունները միշտ օգտագործվում են իրենց բուն քերականական նշանակությամբ: Այլ հարց է, որ կրավորական կառուցվածքի նախադասությունը կարելի է փոխարինել նրան համանիշ ներգործաձև կառույցով, սակայն բովանդակային մակարդակի իմաստն ըմբռնելու համար նման փոխակերպման իրականացման անհրաժեշտությունը բացակայում է: Այսպես՝ Եզնիկի հետևյալ կրավորական ստորոգյալով նախադասությունը՝ «Այլ թե Արհմնն չար կարծիցի նոցա, վասն զԽարամանի անունն յանձին կրելոյ» (Եզն., 198), կարիք չունի վերախմաստավորման, որպեսզի ըմբռնվի նրա բովանդակային նշանակությունը: Ճիշտ է, այս նախադասությունը կարելի է ներկայացնել նաև նրա շարահյուսական համարժեքի՝ ներգործաձև ստորոգյալի օգնությամբ՝ «Նոքա չար կարծեն զԱրհմնն, վասն զԽարամանի անունն յանձին կրելոյ», սակայն ակնհայտ է, որ այստեղ լեզվական միավորի փոխաբերական կիրառությունը բացակայում է, հետևաբար չկա նաև վերախմաստավորում: Եվ ընդհակառակը՝ էթե առանց շարահյուսական կադայարի փոխաբերական իմաստի վերծանման անհնար է ըմբռնել նախադասության բովանդակային մակարդակում արտահայտվող իմաստը, այս դեպքում գործ ունենք վերախմաստավորման, լեզվական միավորների փոխաբերական կիրառության հետ: Բերենք դասական գրաբարում շարահյուսական վերախմաստավորման ևս մի օրինակ. Ղուկասի Ավետարանում հանդիպում ենք արտահայտման մակարդակում ժխտական կառուցվածք ունեցող հետևյալ նախադասությանը. «Եւ մտեալ ի տունն՝ ոչ գոք էթող մտանել, բայց միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս եւ զհայր մանկանն եւ զմայր նորա» (Ղուկ., Ը, 51): Բովանդակային մակարդակում այս նախադասությունն ամեննին էլ ժխտական չէ և հետևյալ կերպ է ներկայանում. «Եւ մտեալ ի տունն՝ էթող մտանել միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս եւ զհայր մանկանն եւ զմայր նորա»: Այս շարահյուսական հոմանիշներից ժխտական կառուցվածք ունեցող նախադասությունները ոճական տեսակետից ավելի արտահայտիչ ու պատկերավոր բնույթ ունեն, այդ պատճառով դրանք, ընթերցողի վրա համապատասխան ներգործության նպատակով, երբեմն փոխաբերաբար օգտագործվում են հաստատական հոմանիշների փոխարեն՝ ստիպելով վերախմաստավորել ողջ շարահյուսական կառույցը: Նույն պատճառով պատմողական բնույթի նախադասությունների բովանդակային իմաստով հաճախ գրաբարում օգտագործվում են հարցական տիպի հոետորական նախադասություններ, որոնք համեմատած իրենց շարահյուսական հոմանիշների հետ ավելի պատկերավոր ու արտահայտիչ են. «Ո՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս Արեաց, եւ իւրաքանչիւր պաշտամունք յայտնի են» (Եղիշ., 83), «Իսկ արդ մեք առանց Տեա՞նն եկեալ իցեմք յերկիրս յայս տալ ընդ սմա պատերազմ. Տէր ասաց զիս, ել յերկիրն յայն եւ ապականեա զնա» (Եսայի, ԼԶ, 10):

Շարահյուսական հոմանշության և վերախմաստավորման հետ սերտորեն առնչվում է լեզվագիտական մեկ այլ հասկացություն՝ փոխակերպումը (трансформация): Նշելով, որ ավանդական քերականության ամենատվորական գործողություններից են տարբեր փոխակերպումները, մասնավորապես՝ կրավորական կառուցվածքի փոխակերպումը ներգործականի, երկրորդական

(ստորադաս) նախադասություններին՝ դերբայական դարձվածների և այլն՝ Գ. Ջահուկյանը հիշատակում է Ջ. Նեսֆիլդի կողմից փոխակերպմանը տրված բնորոշումը. «Փոխակերպել մի նախադասություն՝ նշանակում է այն փոխել մի քերականական ձևից մյուսի՝ առանց փոխելու նրա իմաստը»¹⁸: Փոխակերպությունը դիտվում է որպես ընդհանրական մի մեթոդ, որի օգնությամբ, պահպանելով փոխակերպվող կառուցվածքի միավորները, կատարվում է քերականական ձևերի փոփոխություն: Փոխակերպական քերականությունը տարբերակում է միջուկային նախադասությունները, որոնք համարվում են հիմնական՝ ոչ նշանակիր միավորներ, և փոխակերպները: Վերջիններս ներկայացվում են որպես ոչ հիմնական, սակայն նշանակիր միավորներ, այսինքն՝ ի տարբերություն միջուկային կառույցների՝ օժտված են ոճական որոշակի արտահայտչականությամբ: Այսպես՝ պատմողական ու հաստատական, ինչպես նաև ներգործական ստորոգյալ ունեցող նախադասությունները փոխակերպական քերականության մեջ համարվում են միջուկային, հետևաբար՝ ոճական առումով չեզոք, իսկ դրանց հոմանիշ հարցական ու ժխտական, կրավորաձև ստորոգյալով նախադասությունները դիտարկվում են որպես ոչ հիմնական, սակայն ոճական հավելյալ նրբիմաստներով օժտված փոխակերպներ¹⁹:

Փոխակերպական մեթոդի անմիջական կիրառության միջոցով կարելի է հայտնաբերել փոխաբերաբար գործածված լեզվական միավորների վերաիմաստավորված հոմանիշները: Կիրառելով համապատասխան քերականական փոխակերպման կանոնները՝ կարելի է բովանդակային մակարդակում հայտնաբերել այն միջուկային նախադասությունը, որի իմաստը ոճական որոշակի արտահայտչականությամբ կիրառվել է նշանակիր ոչ հիմնական շարահյուսական կառույցով: Ընդհանուր առմամբ լեզվական նշանների նկատմամբ քերականական փոխակերպման գործընթացում կարելի է իրականացնել չորս տիպի գործողություն՝ նշանի ավելացում, պակասեցում, փոխատեղում և փոխարինում²⁰: Մասնավորապես, այդ փոխակերպական կանոնները հնարավորություն են տալիս առանձնացնել կրկնակի վերաիմաստավորված շարահյուսական կառույցները, որոնք փոխաբերաբար են կիրառվում երկու տարբեր հարթություններում: Դիտարկենք հետևյալ նախադասությունը. «Մինչեւ յե՛րբ կոտորեսցես սուրդ Տեառն. մինչեւ ցե՛րբ ոչ դադարիցես. դարձի՛ր ի պատեանս քո, դադարեա՛ եւ վերացի՛ր» (Յովբ, ԺԸ, 1): Ընդգծված նախադասությունը փոխակերպական ձևափոխությունների ենթարկելու առաջին աստիճանում հարցական նախադասության փոխարեն ստանում ենք նրա հրամայական համանիշը. «բա՛ւ է ոչ դադարիցես»: Սակայն դրանով փոխակերպական գործընթացը չի ավարտվում, քանզի այս և նման կառույցներում վերաիմաստավորումն ավելի խորքային բնույթ ունի: Հաջորդ մակարդակում փոխակերպության միջոցով ստանում

¹⁸ Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 502:

¹⁹ Նույն տեղում, էջ 505:

²⁰ А. Е. К и б р и к. Генеративная лингвистика.– “Лингвистический энциклопедический словарь”, с. 99.

ենք ժխտական նախադասության շարահյուսական համարժեքը՝ հաստատական նախադասության տեսքով. «պարտ է քեզ, զի դադարիցես»: Կրկնակի վերախմաստավորումը տեղի ունի այն դեպքերում, երբ միննույն լեզվական կադրապարում գործ ունենք երկու փոխակերպի հետ. հիշատակված օրինակում հոետորական մեկ նախադասության կազմում միաժամանակ կիրառվել են ժխտական և հարցական փոխակերպներ:

Դասական գրաբարում շարահյուսական վերախմաստավորումները լայնորեն են գործածվել հայ մատենագիրների ու պատմիչների կողմից: Հատկապես ուշագրավ են դասական գրաբարում վերախմաստավորված այնպիսի նախադասությունների օգտագործումը, ինչպիսիք են միակազմ, զեղչված ու թերի նախադասությունների փոխաբերական կիրառությունները, դիմավոր բայի գործառությունով անդեմ բայական կառույցների գործածությունը, հոետորական հարցի ու հոետորական բացականչության միջոցով իրականացվող լեզվառճական վերախմաստավորումները, նվազասույթը և այլն²¹:

Փոխաբերաբար կիրառված շարահյուսական հոմանիշների ուսումնասիրությունը, փոխակերպների միջոցով դրանց հոմանիշ միջուկային նախադասությունների հայտնաբերումը, դրանց լեզվառճական առանձնահատկությունների պարզաբանումն ու արտահայտչական ներգործության էության վերլուծությունը գրաբարի շարահյուսական ոճաբանության կարևոր հիմնահարցերից են:

Օգտագործված աղբյուրների համառոտագրությունների ցանկ

1. Ազաթ.– Ազաթանգեղոս. Հայոց պատմություն, Երևան, 1983:
2. Աստուածաշունչ մատեն հին եւ նոր կտակարանաց, Վիեննա, 1929:
3. Եզն.– Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Երևան, 1994:
4. Եղ.– Եղիշե. Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:
5. Բուզ.– Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, Երևան, 1987:
6. Խոբ.– Սովսես Խոբենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981:

СИНТАКСИЧЕСКАЯ ТРАНСПОЗИЦИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ТЕРЕЗА ШАХВЕРДЯН

Р е з ю м е

В древнеармянском языке (грабаре) нередки случаи метафорического употребления синтаксических единиц, когда последние используются не по своему прямому значени-

²¹ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Թ. Ս. Շ ա հ վ ե թ դ յ ա ն. Պարզ նախադասության կազմության ոճական վերախմաստավորումը գրաբարում.– Լեզու և լեզվաբանություն, Երևան, 2005, էջ 28–36:

ю, а в переносном смысле. Не все синтаксические синонимы являются транспозициями, а лишь те, которые употребляются в значении своей оппозиции в парадигматическом ряду. С помощью трансформационного метода можно найти переосмысленные синонимы использованных синтаксических структур, в частности, в случае применения двукратной транспозиции.

SYNTACTICAL TRANSPOSITION IN CLASSICAL
ANCIENT ARMENIAN LANGUAGE

TEREZA SHAHVERDYAN

S u m m a r y

Frequent are the cases of transposition of syntactical units in ancient Armenian language when the letters are used not in their nominative, but other, transferred meanings. Not all the synonymic sentences are transpositions. For realization of transposition they are to be used metaphorically, in opposite grammatical meaning. By means of linguistic transformational method it's possible to discover the transposed synonyms of used syntactical elements. Particularly the transformational rules give the opportunity to reveal the double transposed syntactical units in ancient Armenian language, which are performed metaphorically in two different aspects.